<<Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան Ֆանարջյան փ. 76 շ.

18 հունիսի 2018 թ.
ժամը 12:00 թիվ՝ 4

**Արձանագրություն**

*<ՈՒԱԿ-ԲՄԱԾՁԲ-18/34> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի*

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**.
*/գն. գեղ. բուժ. գծ./ԳՊ/ԳԱՊ Վ. Շահսուվարյան*
**հանձնաժողովի անդամներ** -
*/գնտ. ծառ. պետ/ ԳՊ/ԳԱ Տիգրան Բեգոյան*
*/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան*
*/անվտանգության ինժեներ/ ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան*
*/ինժեներական. խմբ. ղեկ./ԳՊ/ԲԱ Պետրոս Նադիրյան*
**Հանձնաժողովի քարտուղար՝**
*ԳՊ/Միմ* Հարություն Օհանյան

*ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված*

**Հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին**

*Հանձնաժողովի նախագահ Վ. Շահսուվարյան*

**1 Գնման ընթացակարգի հրավերի պահանջներին համաձայն որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի անհամապատասխանության մասին**

▪ Գնման ընթացակարգի շրջանակներում Մոնտաժտրանսաշին ՍՊԸ-ի որակավորման չափանիշները հիմնավորելու նպատակով ներկայացրած փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ կան անհամապատասխանություններ, մասնավորապես՝

Գնման ընթացակարգի հրավերի 2.5 կետի 1-ին ենթակետի բ) պարբերության համաձայն <<Մասնագիտական փարձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա **հաշիվ ապրանքագրերի** պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

<<Մասնագիտական փարձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորելու համար Մոնտաժտրանսաշին ՍՊԸ որպես նախկինում կատարած պայմանագիր ներկայացրել է 22.09.2017թ-ին կնքված <<19ՀԴ-ԳՀԱԾՁԲ-17/1>> համարով պայմանագիր, պայմանագրին կից հաշիվ ապրանքագրեր և այդ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ավարտական ակտերը: Սակայն Մոնտաժտրանսաշին ՍՊԸ-ի պայմանագրին կից ներկայացրած հաշիվ ապրանքագրերում նշված պայմանագրի համարը և պայմանագրի կնքման ամսաթիվը չեն համապատասխանում ներկայացրած պայմանագրի համարին և կնքման ամսաթվին, մասնավորապես՝ հաշիվ ապրանքագրերում որպես պայմանագրի համար նշված է՝ ՄՊՇ/ԳԳՍ-01 իսկ որպես կնքման ամսաթիվ՝ 7 Սեպտեմբեր, 2017թ.:

Հաշվի առնելով Մոնտաժտրանսաշին ՍՊԸ-ի փաստաթղթերում տեղ գտած անհամապատասխանությունը հանձնաժողովը որոշեց՝

կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և հանձնարարել հանձնաժովի քարտուղարին ծանուցել Մոնտաժտրանսպշին ՍՊԸ-ին առաջարկելով, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել դրանք և <<Մասնագիտական փարձառություն>> որակավորման չափանիշը հիմնավորելու համար էլեկտրոնային փոստի հասցեին՝ nco.gnumner@gmail.com, ուղարկելու միջոցով Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ ներկայացնել հրավերով պահանջվող և պաշաճ կազմված փաստաթղթեր: Այդ փաստաթղթերը չներկայացնելու կամ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելու դեպքում Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին համաձայն Մոնտաժտրանսշին ՍՊԸ-ի ներկայացրած հայտը ենթակա է մերժման.

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն պարբերությամբ սահմանված ծանուցումը ուղարկելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրվա ժամը 12:00-ին

Ընդունել որոշում կողմ *5 (հինգ)*, դեմ *0 (զրո)*

**Գնահատող հանձնաժողովի նախագահ**.
*/տն. տեղ. բուժ. գծ./ԳՊ/ԳԱՊ Վ. Շահսուվարյան*

**հանձնաժողովի անդամներ** -
*/տնտ. ծառ. պետ/ ԳՊ/ԳԱ Տիգրան Բեգոյան*

*/գլխ. հաշվապահ/ ԳՊ/ԳԱ Շուշանիկ Անանյան*

*/անվտանգության ինժեներ/ ԳՊ/ԲԱ Սլավիկ Հայրապետյան*

*/ինժեներական. խմբ. ղեկ./ԳՊ/ԲԱ Պետրոս Նադիրյան*

**Հանձնաժողովի քարտուղար**՝
ԳՊ/*Միմ* Հարություն Օհանյան